ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
Վ. ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Վ. Արտաշատ 16.12.2011թ

N 18 Ն

2012թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով << Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով ավագանին

Որոշեց – 2012թ-ի համար հաստատել տուրքերը և վճարները հետևյալ դրույքաչափերով

1. ՀՀ սահմանված կարգով հաստատված ճանապարհաշինարարական նախագծի համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական շինարարության տեղադրման) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտի համար

   ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000դ)

   բ) սույն կետի ա) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

   բ ա) 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000դրամ

   բ բ) 501-ից 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 70000 դրամ

   Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

   գ) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ

   դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2. Համայնքի տարածքում սենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենցդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված

ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիդային չափերը ընդլայնող կառույցների(այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն 3000դրամ

3. Համայնքի վարչական տարածքում սենքերի, շինությունների, քաղաքաշինարարական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուքը սահմանվում է 5000 դրամ

Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի համար կիրառել 0.5 գործակիցը:

4. 1. Համայնքի տարածքում ոգելից խմիչքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ

2. Ծխածոտի արտադրանքի, վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 2000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուիկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի , տեծնիկական հեղուկների հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու համար տեղական տուրք սահմանել ընթացիկ տարվա համար 2000 դրամ:

7. Համայնքի տարածքում խաղատների, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները, զվարճանքի օբյեկտները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա) առևտրի օբյեկտների համար 25000 դրամ

բ) հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ

գ) բաղնիքների համար 200000 դրամ

դ) խաղատների համար 500000 դրամ

ե) շահումով խաղերի համար 250000 դրամ

զ) վիճակախաղերի կազմակերպում 100000 դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է

է) այլ արտաքին գովազդի համար 1000 դրամ

դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ

9. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից սահմանել վճար՝ 3000 դրամ

Ավագանի՝

Գ.Եսայան Կողմ

Գ.Սարգսյան Կողմ

Ք. Վարդանյան Կողմ

Ա. Հակոբյան Կողմ

Ա.Միքայելյան Կողմ

Թ.Սարգսյան Կողմ

Ս.Ռուբենյան Կողմ

Հ.Սահակյան Կողմ

Վ. Արտաշատի համայնքապետ՝ Ա. Ղազարյան